ՀԱՃԸՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Հ. Ե. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Տավրոսյան լեռնաշղթայի հարավային հատվածում գտնվող Հաճըն քաղաքում բնակչությունը հայտնվել է Բագրատունիների թագավորության (885—1045 թթ.) կործանումից հետո, երբ «գաղթականական հոսանք մը սկսավ դեպի Կիլիկիա։ Այդ միջոցին գաղթականության թիվ մըն ալ երկարեցավ դեպի Հաճըն»[1]։

Թշնամական հարձակումների դեմ իրենց գոյատևման պայքարով հաճընցիները փառավոր էջեր են գրել հայ ժողովրդի պատմության մեջ։ Միայն XX դ. հաճընցիները երեք անգամ ենթարկվեցին Թուրքիայի կառավարողների հայակործան գործողություններին։ Արյունալի բախումների ժամանակ քաղաքը և նրա շրջակա գյուղերն ավերվեցին, զոհվեցին տասնյակ հազարավոր անմեղ հաճընցիներ։

Օսմանյան կայսրությունում դարասկզբին տեղի ունեցան խոշոր իրադարձություններ. դրանց սկիզբը 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումն էր, որի կեղծ կարգախոսներին հավատալով, գրում է կիլիկիացի հույն պատմաբան Մ. Պաղծիլօղլուն, «Թուրքերը, հույները, հայերը, քրդերը և հրեաները միավորված տոնեցին այդ իրադարձությունը»[2]։ 30-ամյա աստվածապետական, ֆեոդալական և բռնատիրական վարչակարգի կործանումը ողջունեց նաև կիլիկիահայությունը։ Ամենուրեք, այդ թվում և Հաճընում, հայ ժողովուրդը «փարած էր հյուրիեթի (ազատության—Հ. Ղ.) գաղափարին և անկե կակնկալեր շատ մեծ բաներ»[3]։

Երիտթուրքերի հաղթարշավից կարճ ժամանակ հետո, 1909 թ. ապրիլին Հաճընում ստացված հեռագրերից հայտնի է դառնում, որ ազատության, եղբայրության, արդարության այդ «մունետիկների» ձեռքով «10—15 օրվա մեջ 30.000 կիլիկյան հայեր զոհ գնացին՝ խժդժորեն ջարդվելով»[4]։ Երիտթուրքերի ծրագրած ջարդերի ժամանակ ավերվում ու հիմնահատակ կործանվում են Կիլիկիայի հայաբնակ Տարսոն և Մարաշ քաղաքները, տասնյակ գյուղեր ու բնակավայրեր։ Սակայն «Սսում, որը հայ եկեղեցու կաթողիկոսի աթոռանիստ քաղաքն էր, Հաճընում, Դյորթ-յոլում և այլ վայրերում հայերը հերոսական դիմադրություն ցույց տվեցին և հաջողությամբ հետ մղեցին հրոսակների հարձակումները»[5]։

Կայսրության ամբողջ տարածքի հայությանն ավելի ահավոր օրեր էին սպասում։ Հեղաշրջումից յոթ տարի հետո երիտթուրքական դահիճ-մինիստրների որոշմամբ իրականացված «հայերի ցեղասպանությունը մարդկության պատմության մեծագույն զանգվածային ոճրագործությունն էր։ Այն հավերժական խարանադրոշմ էր Թուրքիայի և Մարդկության պատմության մեջ»[6]։

---

1 Մակրատ Թերզյան, Հաճընի ութամյա դյուցազնամարտը, Բուենոս Այրես, 1956, էջ 33։

2 Μίλτου Παγτζιλογλου. Η Γενοκτονία των Ελλήνων και των Αρμενίων της Μικράς Ασίας, Αθήνα. 1988, σ. 60 (այսուհետև՝ Մ. Պաղծիլօղլու)։

3 Յ. Պ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը և Դոզան-դաղի հայ գյուղերը, Լոս Անջելես, 1942, էջ 567։

4 Նույն տեղում, էջ 568, տե՛ս նաև Β. Θεοδωρόπουλος, Οι τούρκοι και εμείς. Αθήνα. 1988, σ. 93.

5 Մ. Պաղծիլօղլու, նշվ. աշխ., էջ 62։

6 Նույն տեղում, էջ 77։

Երկրի բոլոր անկյուններից մարդկային բազմությունները, ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր՝ տարեց տղամարդիկ ու անչափահասներ, կանայք՝ կրծքի երեխաներով ու աղջիկներ ոտաբոբիկ շարժվում էին դեպի արևելք։ Հալեպից Բաղդադ ճանապարհին՝ 600 կիլոմետր ձգված Դեյր-էզ Զոր անապատը լցվել էր բռնագաղթված հայերի անշնչացած մարմիններով։ Այդ արհավիրքի օրերին Հաճընի 35.000 զավակներից չվերադարձան 29.000-ը։ Քաղաքում 1919 թ. «հուլիսի սկիզբները հայության թիվը մոտավորապես 6.000-ի հասած էր»[7]։

Ջարդից ու քառամյա տարագրությունից վերապրած հաճընցիները ձեռնամուխ եղան վերաշինական աշխատանքներին։ Բոլոր հաճընցիները, ասես հոգեփոխության ենթարկված, մոռանալով միջկուսակցական անիմաստ ու անհաշտ պայքարը, վճռել էին անողոք թշնամու դեմ կենաց և մահու մարտերում միասնականորեն հանդես գալ։

Երկու անգամ կոտորվելուց հետո կիլիկիահայությունը, այդ թվում և հաճընցիները, հույս ունեին Արևմուտքի երկրների, հատկապես Ֆրանսիայի օգնությամբ դիմակայել թուրքական բաշիբոզուկներին։ Փարիզում և Լոնդոնում քաղաքական ու ռազմական շատ գործիչներ փորձում էին հայերին համոզել, որ իրենք անկեղծ բարեկամներ են և պատրաստ են նպաստել անկախ Հայաստանի ստեղծմանը։ Այդպիսի «հայասերներից» էր Կիլիկիայում ֆրանսիական օկուպացիոն զորքերի գնդապետ Է. Բրեմոնը, որի հայտարարության համաձայն «այդ երկիրը (Կիլիկիան—Հ. Ղ.) սահմանված է ըլլալու հայկական հողամաս»[8]։ Թուրքիայում օկուպացիոն ֆրանսիական գոտու քաղաքական վերահսկողությունն իրագործելու կոչված այդ զինվորականը հայերի հետ իր նամակագրություններում օգտագործում էր «Հայաստանի վարչապետ» տիտղոսային մակագրությունը։ Ի պատիվ «վարչապետի» ու նրա ներկայացրած պետության Կիլիկիայի բոլոր հայաբնակ վայրերի հասարակական շենքերի վրա ծածանվում էին ֆրանսիական եռագույն դրոշներ, որոնք խորհրդանշում էին օկուպացիոն ռեժիմը։

Իրենց ավերված օջախները վերադարձած հաճընցիներին մտահոգում էր ֆիզիկական ոչնչացումից փրկվելը։ Դա մարդկային ամենատարրական իրավունքի հարց էր, հարցերի հարցը. «չէ՞ որ Դեր-Զորը կմխար տակավին, որուն ամբողջ մեղքը մեր վզին դնել կեզներ «քաղաքակիրթ» մարդկությունը, հանդարտ խղճով քնանալու համար ... կրնար կրկնվիլ...»[9]։

1920 թ. առաջին օրերին Հաճըն է գալիս զորավար Անդրանիկի զինակից Սարգիս Ճեպեճյանը։ Այդ օրերին, գրում է Հաճընի ինքնապաշտպանության Բ վաշտի հրամանատար Մեսրոպ Շիրտմյանը, «առաջնորդարան հրավիրված էինք, օրվա կացության շուրջ խորհրդակցելու՝ Սարաճյան սրբազանի նախագահության տակ։ Սրբազանը երկտողով մը Ճեպեճյանին ժողովի հրավիրեց, ուրիշ քանի մը անձեր ալ կանչելով։ Ինքնապաշտպանության խորհուրդ մը կազմվեցավ սրբազանին նախագահությամբ, Միհրան Գայանի ատենապետությամբը և Սարգիս Ճեպեճյանի Զինվորական ընդհանուր հրամանատարությամբը»[10]։

Ռազմական ճամբար հիշեցնող քաղաքում հայտարարվում է պաշարողական վիճակ։ Զինվորական ընդհանուր հրամանատարության տրամադրության տակ են դրվում մարդկային և նյութական ռեսուրսներ։ Քաղաքն անառիկ դարձնելու համար Ս. Ճեպեճյանի հրամանով, «զորակոչի են ենթարկվում 16—50 տարեկան բոլոր տղամարդիկ։ Զինված ուժերը բաժանվում են չորս վաշտերի։ Կազմվում են առաջապահ և պահեստի խմբեր, որոնք կանոնավոր մարզվում են։ Զինվորական խիստ կարգապահություն է սահման-

7 Ց. Գ. Գողոսյան, նշվ. աշխ., էջ 613։

8 Վահան Մալեզյան, Ճամբուս վրա (Հուշաքաղ), Փարիզ, 1958, էջ 144։

9 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 41։

10 Նոր Հաճըն, 1970, № 10, էջ 280։

վում։ Սակայն զենքի խիստ կարիք էր զգացվում. ութ հարյուր կռվողներից միայն երեք հարյուրը իրենց անձնական զենքն ունեին»[11]։

Պաշտպանության ուժերին մասնակցում էին նաև Թուրքիայի տարբեր շրջաններից այստեղ հասած երիտասարդներ, որոնք աչքի էին ընկնում իրենց կարգապահությամբ ու մարտունակությամբ։ Հաճընցիների ճակատագիրը բաժանած «կովկասցի, կեսարացի, Թոմարզացի, էվերեկցի, օվաջրգցի և շատ մը ուրիշ հերոսներ կռվեցան ու զոհվեցան հանուն հայրենիքի ու հանուն մարդկային կյանքի»[12]։

Հաճընի լեռնային անառիկ դիրքը նրա պաշտպաններին հնարավորություն կտար արդյունավետ դիմագրավել Թշնամական ուժերի անակնկալ հարձակումներին, սակայն անհրաժեշտ էր պաշտպանական ծրագիր մշակել ու միջոցներ ձեռնարկել։ Ծրագիրը, որ մշակել էր Ս. Ճեպեճյանը, նախատեսում էր ստեղծել պաշտպանության երկու գոտի, որոնցից առաջինը պետք է հակառակորդին դիմագրավեր քաղաքի սահմաններից դուրս, ընդգրկելով «ռազմական ընդարձակ շրջագիծ մը, խոր ձորերով և երկնամերձ լեռներով կտրատված»[13], իսկ երկրորդը ամրությունների մի համակարգ էր, որը ստեղծվելու էր անմիջականորեն «քաղաքին շուրջ, ծայրամասի թաղերուն առջև, այնտեղ փութով կառուցանելով պատնեշներ, փորելով խրամատներ, գետնուղիներ և ինչ-որ անհրաժեշտ էր մոտալուտ Թշնամու գրոհները դիմակայելու համար»[14]։

Պաշտպանական համակարգի ստեղծման համար առաջին հերթին պահանջվում էր նյութական ու ֆիզիկական հսկայական միջոցների հատկացում։ Սպառնացող վտանգը քաղաքացիներին ստիպեց դադարեցնել քանդված օջախների և հանրօգուտ հաստատությունների վերականգնման աշխատանքները և չդադարող լարվածությամբ իրագործել պաշտպանական գծերի ստեղծումը։

Ս. Ճեպեճյանի կանխատեսումներն անհիմն չէին։ Մարաշում 1920 թ. հունվարի 21-ից մինչև փետրվարի 11-ը տևած կոտորածի ժամանակ Թուրքական յաթաղանից զոհվում և նահանջի ճանապարհին ընկնում են մոտ 12 հազար հայեր[15], որից հետո Թուրքական կանոնավոր բանակն ու չեթեները հետապնդում են հեռացող ֆրանսիական զորքերին ու հայերին։

Ֆրանսիական զորքերի նահանջը դեպի Կարս, Բազար ու Սիս, էլ ավելի էր ուժեղացրել Հաճընին սպառնացող վտանգը։ «1920 փետրվարի 22-ին Հաճընի մեջ շրջակայեն հասնող լուրերը վրդովեցուցիչ էին,—գրում է Հաճընի առաջնորդ եպիսկոպոս Պ. Սարաճյանը,— ամեն կողմ պատրաստություն կա Հաճընի վրա հարձակելու և միայն ձյունահալին կսպասվի»[13]։

1920 թ. փետրվարին Կիլիկիայում ֆրանսիական հրամանատար գնդապետ Է. Բրեմոնը Հաճընի քաղաքապետ է նշանակում իրավաբան, հնչակյան գործիչ Ղ. Զալյանին։ «Շատ խառնակ ժամանակաշրջան էր,— գրում է Կ. Զալյանի կրտսեր որդի Վ. Զալյանը։—Մեր ընտանիքը, մեր հարազատները հորս Հաճընն գնալու դեմ էին։ Այդ ժամանակ մենք գտնվում էինք Ադանայում։ Հայրս անդրդվելի մնալով գնաց, պատճառաբանելով, որ Հաճընում իր ներկայությունն անհրաժեշտ է»[17]։ Հայրենի հողի ու նրա զավակների փրկության մեծ նվիրյալը ճամփա է ընկնում դեպի իր ծննդավայրը, թեև գիտեր, թե ինչպիսի վտանգներով էր լի իր առաքելությունը։ «Զալյան ոչ մի կասկած ուներ,

11 Ռ. Գ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ., Երևան, 1970, էջ 168։

12 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 41։

13 Նույն տեղում, 1970, № 10, էջ 280։

14 Նույն տեղում։

15 Ռ. Գ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 162։

16 Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 2։

17 Տե՛ս ՀՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության ու մշակույթի բաժնի գրադարանի արխիվ, թղթ. 3, վավ. 1, թ. 2։

որ այդ պաշտոնն ստանձնելով իր մահվան վճիռն ստորագրած պիտի ըլլար Հակառակ անոր՝ ընդունեց առաջարկը և մեկնեցավ իր պաշտոնատեղին, իր հետ տանելով 1.200 հրացան, 125.000 փամփուշտներով, մի քանի ձեռնառումբեր և 300 տոննա ցորեն, մաս մըն ալ առողջապահական պիտույքներ»[18]։

Ուսումնասիրելով Մարաշի և այլ վայրերի պաշտպանական կռիվների փորձը, Կ. Զալյանը գալիս է այն համոզման, որ իր համաքաղաքացիները կանգնել են մեծ երկընտրանքի առջև՝ ընդունել մարտը կամ նահանջել։ Նա գտնում էր, որ նենգ հակառակորդի զորքերի հարձակումները պետք է դիմագրավել կազմ ու պատրաստ։ Ուստի Հաճըն ժամանելու առաջին իսկ օրերից նրա եռուն ու բազմակողմանի գործունեության առանցքային հարցը դարձավ քաղաքի ինքնապաշտպանության փրկարար գործն ամուր հիմքերի վրա դնելը։ Հաճըն հասնելու հաջորդ օրը՝ 1920 թ. փետրվարի 20-ին, նա Բրեմոնին հեռագրով տեղեկացնում է. «Կաղային (գավառակի—Հ. Ղ.) ներքին ու արտաքին կացությունը առայժմ հանդարտ է, որուն առաջին օգնականը բնությունն է, որ ամեն կողմ ձյունե առժամանակյա պարիսպով մը շրջապատած է»[19]։ Մարտն ընդունելու որոշումը Կ. Զալյանն առնչում էր Ֆրանսիայի օժանդակության հետ, այն երկրի, որն ստանձնել էր Կիլիկիայի հողերի պաշտպանությունը և որի ներկայացուցիչները «գրական և հսկայական օգնություն ընելու խոստումներ ըրած և որոշ հավաստիքներ տված են»[20]։ Համոզված լինելով, որ Կիլիկիայի հայության ճակատագիրն անխզելիորեն կապված է Ֆրանսիայի հետ, նա կարծում էր, որ Ֆրանսիայի շահերի պաշտպանությունն իր համար ունի այնպիսի իմաստ ու նշանակություն, ինչպիսին էր ամբողջ Կիլիկիայի պաշտպանությունն ու անկախությունը։ Կ. Զալյանը գնդապետ Բրեմոնին հավաստիացնում է. «Ֆրանսական դրոշին փառքն ու պատիվը բարձր պահելը կյանքիս գնովը սրբազան պարտականություն մը կնկատեմ»[21]։

Քաղաքում կարգ ու կանոնի հաստատման համար Կ. Զալյանն իր կառավարման առաջին օրերին կազմակերպում է «ոստիկանական տեղամաս», որը բաղկացած էր 100 մարդուց, ինչպես նաև բանակային 4 միավորում՝ յուրաքանչյուրը բաղկացած 100-ական կամավորներից, որոնք անմիջապես ձեռնամուխ եղան զորավարժությունների և քաղաքի մատույցների ամրացմանը[22]։

Հեռատես գործիչն ի մի բերեց նաև քաղաքի հայ ազգաբնակչությանը, որը բացի հայ առաքելական եկեղեցուց, պատկանում էր նաև կաթոլիկական ու ավետարանական հարանվանություններին։ Դեռևս մինչև առաջին համաշխարհային պատերազմը քաղաքի 35 հազար բնակչությունից «23.000-ը հայ-լուսավորչական, 12000-ը հայ-բողոքական, 300-ը հայ-կաթոլիկ և 300-ի չափ ալ իսլամ»[23] էին։ Ստեղծվեց համաքաղաքային միասնություն, որը պիտի դիմագրավեր քեմալական կանոնավոր ղինված ուժերի և չեթեների հարձակումներին։

Կ. Զալյանին առաջին հերթին մտահոգում էր նաև Հաճընի ու գավառի թուրք ազգաբնակչության հետ հարաբերությունների բարելավման հարցը, ուստի «խորապես տեղյակ թուրք հոգեբանության, երկու ազգերու միջև բացված խրամատը ավելի չխորացնելու առաջադրությամբ, Հաճընի գավառային խաղաղությունը պահպանելու միակ միջոց ընտրեց՝ թուրքերը սիրաշահելու քաղաքականություն»[24], և ազատ արձակեց քաղաքում ներկայված

18 Տիգրան Պոյաճյան, Հայկական լեգեոնը, Ուոթրթաուն, 1965, էջ 299։
19 Յ. Պ. Պոզոսյան, նշվ. աշխ., էջ 632—633։
20 Նոր Հաճըն, 1943, № 8—9, էջ 117։
21 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 227։
22 Մ. Պաղծիլոզլու, նշվ. աշխ., էջ 118։
23 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 34։
24 Նույն տեղում, էջ 224։

300 թուրք ոճրագործներին։ Բացի այդ, Կ. Զալյանի որդու վկայությամբ, նրա հայրը «շատ բան էր անում, որ հայերի և թուրքերի միջև նորմալ վիճակ ստեղծի, և իր կյանքը վտանգելով գնում էր Հաճընի շրջակայքում գտնվող թուրքական գյուղերը, բանակցում և համոզում, որ փոխադարձ առևտուր անեն։ Մեծ դժվարություններով հաջողված առևտուրը միայն որոշ ժամանակ շարունակվում էր»[20]։

Հակառակորդի վերահաս հարձակումներն արդյունավետ դիմագրավելու համար անհրաժեշտ էր հետախուզական տեղեկություններ հավաքել քեմալական զորքերի ու չեթեների տեղաշարժերի և պլանների մասին։ Ուստի Կ. Զալյանը Բրեմոնից խնդրում է, որ իր տրամադրության տակ դրվի «երկու հազարեն մինչև երեք հազար (հավանաբար ֆրանսիական ֆրանկ—Հ. Ղ.)»[26]։ Դեռևս հետախուզական ծառայությունը չէր ստեղծվել, երբ Կ. Զալյանին հայտնի դարձավ, որ «քեմալականները հաջողած էին ի մի բերել չորս հազարև ավելի անկանոն զինվորներ և երկու հազար ձիավորներ, որոնք դիրք բռնեցին Անդերոն լեռան կողքին»[27]։ Հաճընի ազգաբնակչությունը միտինգներում տագնապով հարց էր տալիս՝ ի՞նչ է լինելու վաղը, ինչպե՞ս է լուծվելու իր մռայլ ու անորոշ վիճակը, ինչ են մտածում «հայասեր» ֆրանսիացիները։ Այդ հարցադրումները մնում էին առանց պատասխանի։ Քաղաքից ուղարկված տագնապալի հեռագրերի պատասխանը չէր ստացվում կամ դրանց «նույնիսկ արհամարհումներով կպատասխանվեին անոնց կողմե, որոնք խառնակչական մանածը ներկելու մեջ խտրություն չդրին հայու և թուրքի միջև, և իրենց արյունոտ նպատակներին հասնելու համար ստեղծեցին կանխամտածված քաոս մը»[28]։

Հրդեհված ու ավերված քաղաքում պահպանված միակ կառույցը՝ Սահակ-Մեսրոպյան հոյակապ վարժարանի շենքը, վեր էր ածվել համաքաղաքային վարչական-ռազմական և մշակութային կենտրոնի։ Շենքի առաջին հարկում գործում էր եկեղեցին, իսկ հինգերորդ հարկում առաջնորդարանն էր։ Այստեղ փետրվարի 22-ին լրիվ կազմով նիստ է գումարում Ինքնապաշտպանության խորհուրդը։ «Հոն ներկա էր նաև Հաճընի նոր տեղակալը՝ տիար Կարապետ Զալյան։ Ժողովականները տխուր էին, ստույգ բայց չարագուշակ լուրեր առած էին։ Ժողովը երկար խորհրդակցութենե վերջ սա եզրակացության եկավ, որ ազդեցիկ անձնավորություն մը իբրև պատվիրակ երթա Ադանա»[29] գնդապետ Բրեմոնի մոտ։

Ինքնապաշտպանության խորհրդի գրեթե ամբողջ կազմը մեծ հույսեր էր տածում ֆրանսիական իշխանությունների վրա, անվերապահորեն հավատում էր, որ «ասպետական» Ֆրանսիան վտանգի մեջ մենակ չի թողնի քաղաքի պաշտպաններին։ Սարաճյան սրբազանը մեկն էր այն գործիչներից, որը չէր վստահում ֆրանսիական խոստումներին։ Ահա թե ինչու, նա հուզված ու վրդովված իր համաքաղաքացիներին քաջալերում և հորդորում է «հանդարտ ու պաղարյուն ըլլալ և հույսը դնել իրենց անընկճելի կորովին, իրենց ուժին և իրենց անառիկ լեռներուն վրա»[30]։ Ժողովը Սարաճյանին առաջարկում է ստանձնել այդ առաքելությունը և ֆրանսիական ռազմական ղեկավարությանը տեղյակ պահել քաղաքի վրա կախված վտանգի, նրա ներքին վիճակի մասին, հայցել Բրեմոնի ռազմաքաղաքական աջակցությունը, հայ կամավորներ հավաքագրել և նրանց ուղարկել Հաճընի պաշտպանությանը մասնակցելու

---

25 ՀԱ ռուսահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի գրադարանի արխիվ, թղթ. 3, վավ. 1, թ. 2։

26 Յ. Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 633։

27 Տ. Պոյաճյան, նշվ. աշխ., էջ 300։

28 Ս. Թերոյան, նշվ. աշխ., էջ 223։

29 Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վավ. 29, թ. 1—2։

30 Նույն տեղում, թ. 1։

համար։ Սակայն Սարաճյանը տարբեր պատրվակներով չի ուզում հեռանալ քաղաքից, որովհետև «ֆրանսիացիներե որևէ օգուտ չէր հուսար. Սիսի ֆրանսական կառավարիչը, պ. Թայարդա, խոստացած էր ֆրանսացի սպա մը ղրկել Հաճըն, միշտ հոն մնալու համար, նույնիսկ այդ խոստումը կատարած չէր»[31]։ Սարաճյանն այս և այլ փաստերով փորձում է ժողովականներին համոզել, որ արտաքին ուժերի օգնության վրա հույս դնելը զուր է, բայց նրանք անդրդվելի են մնում։ Որոշվում է պատվիրակություն կազմել, որի մեջ Սարաճյանից բացի մտնում են բողոքական համայնքի ղեկավար Հարություն Խաչատուրյանը և Սահակ-Մեսրոպյան ազգային վարժարանի տնօրեն Շմավոն Փոստոյանը։ Պատվիրակության առաքելությունը հետևյալն էր.

«Առաջին. Ադանա երթալ, դիմել ֆրանսական իշխանության ներկայացուցիչ գնդապետ Բրեմոնին և հանուն Հաճընի խնդրել զինվորական և նյութական օգնություն, այսինքն զինվոր, զենք, ռազմամթերք և դրամ։

Երկրորդ. Ի հարկին ադանայարնակ հաճընցիներե և այլ փափաքողներե կամավորական խումբեր կազմել և ղրկել Հաճընն։

Երրորդ. Այս ըլլալիք դիմումներուն հաջողության կամ անհաջողության պարագային հեռագրով հրահանգ տալ Հաճընին՝ դիմադրելու կամ նահանջելու»[32]։

Հաճընի հերոսամարտի անմիջական մասնակից Ս. Թերզյանը գրում է, որ Սարաճյանի գլխավորած պատվիրակությանը հանձնարարված էր փակ ծրարով ֆրանսիական ռազմական հրամանատարությանը ներկայացնել ինքնապաշտպանության համար անհրաժեշտ հետևյալ օգնությունը. «քսան հազար ոսկի, հազար անձ իրենց զենքերով, երկու հազար բատանիա (ծածկոց—Հ. Ղ.), 250 հազար փամփուշտ, 12 հեռաձայն, 12 հեռադիտակ, 150 երկաթյա թի, 200 բրիչ, հազար կիլո շաքար, 90 կիլո պողպատ, վեց գնդացիր, 1000-ական կիլո ծխախոտ և աղ»[33]։

Ճանապարհորդության երկրորդ օրը պատվիրակությունը Հորթում կոչված բացատում ենթարկվում է չեթեների հարձակմանը և փետրվարի 23-ի դիշերը հասնում Սիս։ Քաղաքի ֆրանսիական պարետ կապիտան Թայարդան «քաղաքի մեջի իր տունը լքած ու վանք (Սսո մայրավանք—Հ. Ղ.) փոխադրված էր ապահով ըլալու համար»[34]։ Այնտեղ ընդունելով պատվիրակությանը, Թայարդան լսում է Հաճընի ճգնաժամային վիճակի մասին հաղորդումը, գրառումներ է կատարում քաղաքի համար պահանջվող օգնության մասին, բայց հրաժարվում է Սսից Հաճընն զինվորական ուժեր ու իր միջոցներով ռազմանյութ ուղարկել։ Նա ասում է. «Մի՛ սպասեք, որ կրնանք զինվոր տրամադրել Հաճընի պաշտպանության կամ զենքի փոխադրության համար»[35] և Սարաճյանին խորհուրդ է տալիս զուր տեղը Ադանա չգնալ։ Թայարդայի հետ զրույցը հիասթափեցնում է պատվիրակության անդամներին։ Նրման օգնություն նրանք ոչղղակի Ադանայից էլ չէին կարող ակնկալել, մանավանդ որ Դաշտային Կիլիկիան ամբողջովին «չեթեներով լեցուն էր, ոչ միայն ճամփորդները կկողոպտվեին, այլ նաև այն թուրք գյուղերը, որ չեթեներուն չէին միանար, կթալանվեին, նույնիսկ կհրկիզվեին»[36]։

Բոլոր կողմերից քեմալական ուժերով շրջապատված Հաճընը 1920 թ. մարտի 15-ին ամբողջովին կտրվել էր արտաքին աշխարհից։ Քաղաքի քաջարի պաշտպանները պատրաստվում էին դիմադրավելու հակառակորդի գերազանցող ուժերին։ 1920 թ. ապրիլի 1-ի վաղ առավոտյան քեմալական զոր-

---

31 Նույն տեղում, թ. 2—3։

32 Նույն տեղում, թ. 3, տե՛ս նաև Ռ. Գ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 169։

33 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 229։

34 Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 14, վամ. 29, թ. 10։

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում, տե՛ս նաև Ռ. Գ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 169։

քը թնդանոթային հարվածների աջակցությամբ հարձակվում է քաղաքից հեռու, ձյունապատ գագաթներում դիրքավորված հայ աշխարհազորայինների փոքրաթիվ խմբերի վրա։ Փոխհրաձգության ժամանակ լեռնային դիրքերը ձեռքից-ձեռք են անցնում։ Այդ մարտերի ղեկավար՝ Արևելյան ճակատի հրամանատար Մ. Շիրոմյանն իր օրագրում գրել է. «Թշնամին միշտ կը առաջանա, և մենք դեպի քաղաք կքաշվինք։ Գերմանական փամփուշտնիս լմնցավ լեռնային բախումներու ընթացքին. կամա-կամա որոշվեցավ բոլորովին քաղաք քաշվիլ։ Ճեպեճին հակառակեցավ՝ քաղաքեն դիմադրել անկարելի է ըսելով»[37]։

Անհավասար մարտերից հետո հաճընցիների սակավաթիվ ուժերը տեղափոխվեցին դիմադրության երկրորդ գոտի, որը, ինչպես նշեցինք, ավելի հուսալիորեն պետք է ապահովեր քաղաքացիների պաշտպանության գործը։ «Թշնամին, որ գրեթե կրնկակոխ հետևած էր մեր նահանջող ուժերուն, հիմա սեղմորեն օղակած քաղաքը՝ օր ու գիշեր կրակ կմաղեր քաղաքին վրա, մոտակա բարձունքներեն, ռազմական կարևոր կետեր կբռներ, դիրքեր կամրացներ և շոշափումի հարձակումներ կըներ»[38]։ Լեռնային դիրքերը թողած քաղաքի պաշտպան մարտիկները, թեև համոզված էին, որ իրենց չի հաջողվի վերջնական պարտության մատնել կամ վերջնականապես հեռացնել անհաշիվ և լավ զինված թուրքական բաշիբոզուկներին, արհամարհելով նրանց գնդակները, նոր դիրքեր էին ստեղծում, «նախընտրելով ոտքի վրա պատերազմի դաշտին պատվավոր մահը, քան ծնկաչոք ստրուկի կյանքը»[39]։

Հակառակորդը հրետանային ռմբակոծություններով քայլ առ քայլ ավերում էր քաղաքը։ Ամենուրեք լսվում էին «բարբարոս բանակին «իլերի՜» (առաջ—Հ. Ղ.) հնչող փողին ձայնը, «ալլա՜հ, ալլա՜հ» պոռացող հազարավոր չեթեների խլացուցիչ աղմուկը։ Ապրիլի 6-ին հայ մարտիկները թշնամուն հարկադրեցին նահանջել»[40]։

Առաջին հարձակման ձախողումից հետո թուրքական ուժերի նպատակակետերից է դառնում քաղաքի արևմտյան լեռնալանջին գտնվող «Ս. Հակոբի վանքը՝ ամրակուռ պատնեշով բոլորված»[41]։ Հաճընի հերոսամարտի օրերին վանքը զինավարժությունների կենտրոնի էր վերածվել։ Մինչև իսկ քաղաքի աշակերտությունը «կերթար հոն, վերին կարգերով, ուսուցչական ամբողջ կազմով, մարզվելու՝ վանքին մոտ գտնվող Բարեգործականի որբերուն հետ»[42]։ Կրոնական այդ կենտրոնում տեղավորվել էին նաև տնազուրկներ։

Ապրիլի 12-ին Ս. Հակոբա վանքը ենթարկվում է հրետանային գնդակոծության։ Վանքը պաշտպանողների մեծ մասը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության որբանոցի սաներն էին՝ իրենց ուսուցիչների գլխավորությամբ։ Գիշերային ժամերին հակառակորդին հաջողվում է գրավել դիմադրության այդ կենտրոնը։ Այդ աննշան, բայց առաջին հաջողությունը նշվում է թուրքերի գոհաբանական աղոթքներով ու խրախճանքով։ Ինչ վերաբերում է հաճընցիներին, ապա նրանք առաջին անգամ զգում են, որ հայրենի քաղաքի ու նրա ազգաբնակչության պաշտպանությունն ու վերահսկումն իրենց ուժերից վեր է։ Ընդամենը 300 մարտիկից բաղկացած աշխարհազորը չէր կարող իրագործել տարածված քաղաքի ամբողջական պաշտպանությունը։ Պաշտպանական կռիվների առաջին օրերից իրենց «հայրենասիրությամբ, փորձառությամբ, ռազմական տաղանդով, աննկուն կամքով ու հարգանք պարտադրող քաջությամբ»[43] աչքի ընկան ընդհանուր հրամանատար Ս. Ճեպեճ-

37 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 39։

38 Նոր Հաճըն, 1970, № 10, էջ 282։

39 Նույն տեղում, էջ 288։

40 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 275։

41 Վ. Մ. Քյուրքչյան, Հայկական Կիլիկիա, Նյու Յորք, 1919, էջ 302։

42 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 41։

43 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 275։

յանը և կառավարիչ Կ. Զալյանը, Բ վաշտի հրամանատար Մ. Շխրտմյանը, քաջասիրտ հերոսներ Ա. Սաչյանը, Զ. Թորոսյանը և շատ ուրիշներ։ Բոլորը «նույնանման փափախներ ունեին, յաթաղան բեղեր, մեջքերնուն՝ ատրճանակ։ Միջահասակ, լայնակազմ այն մեկը «Ճեպեճին» է, հեռադիտակը՝ չերկեսկայի կուրծքն ի վար կախ։ Կովկասյան հով մը բոլորին ալ վրան»[44]։

Ս. Ճեպեճյանը հմտորեն ղեկավարում էր մարտերը և անձնական խիզախության օրինակ ծառայում։ Նա «ռուսական ճերմակ ղալփախ գդակ մը կգործածեր . (հակառակորդները—Հ. Ղ.) այն կարծիքը կդոյացնեն, թե Հաճընի մեջ ռուսահայ ռազմագետներ կան»[45], որոնք գլխավորում են դիմադրական պայքարը և խնդիր են դնում առաջին հերթին նրա և մյուս «ռուսահայերի» գերեվարումը։ Այդպիսով քեմալական ուժերը մտադրվել էին գլխատել հայ մարտիկներին, որոնք հիմնականում ռազմական գիտելիքներից զուրկ պատանիներ ու երիտասարդներ էին և մարտական հմտություններ էին ձեռք բերում կռիվների ժամանակ։ Նրանց ղինավարժական գիտելիքներ էին ուսուցանում ռուսական և թուրքական բանակում ծառայած զինվորականները։ Քաղաքի պաշտպան ուժերի մարտունակությունը բխում էր հիմնականում անձնական խիզախությունից։ Կիլիկիա թաղամասի մարտիկներից մեկը՝ Մ. Քելյանը այդ մասին գրում է. «Երբ լեռներեն նահանջելով Հաճընի շուրջ դիրքավորվեցանք, մենք՝ երիտասարդներս, տարրական գաղափար չունեինք ղինուորենքի և պատերազմական գործողության մասին»[46]։

Ապրիլի երկրորդ կեսին կռվող կողմերը տեղական բնույթի գործողություններ էին կատարում և սահմանափակվում միմյանց դիրքերը հետախուզելով։ Հաճընահայերը, անկախ տարիքից ու սեռից, գիշերային ժամերին լծվել էին լարված աշխատանքի՝ հողով պարկեր էին լցնում, խրամատներ փորում, պատեր էին հյուսում, ստորերկրյա գաղտնանցքեր պատրաստում։ Ապրիլի 30-ին թուրքական հրանոթները սկսում են ռմբակոծել քաղաքի Կիլիկիա թաղամասը։ Հայերի ամրացված դիրքերի վրա թափվում է նաև գնդացիրների անընդմեջ կրակոցը։ Քանդվում են հին, ինչպես նաև վերականգնված տները, բայց մարտերը չեն դադարում։ Հակառակորդի կրակոցները շարունակվում են նաև գիշերային ժամերին։

Թշնամական հարձակումը դիմագրավելիս մարտիկներին ոգեշնչել են Զեյթունի հերոսական պաշտպանների և հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առասպելական հերոս զորավար Անդրանիկի սխրագործությունները։ Մարտի մասնակից Վ. Եզեկիելյանը գրում է, որ հերթական դադարի ժամանակ ինքնապաշտպանության խորհրդի անդամ «Միհրան Դայան սկսավ պատմել Զեյթունի պատերազմի մասին՝ մեզ սիրտ տալու համար, իսկ կամավոր Արշակ՝ Անդրանիկ փաշայի քաջագործությունները»[47]։

Մի պահ թվում էր, թե պաշտպանները, որոնք տակտիկական նկատառումներով և ռազմանյութի խնայողության նպատակով վճռել էին «պարապ փամփուշտ չնետել և ձեռքի ռումբերը տեղին և ժամանակին գործածել»[48], լռել են առմիշտ։ Մթությունից օգտվելով, 200-ի մոտ թուրքական զինվորներ, որոնց հետևում էին հազարավոր չեթեներ, «թիթեղով քարյուղ առած տունները հրդեհելու կուգան, բայց հազիվ թե դիրքերեն դուրս կելլեն՝ անդիի աշխարհը կերթան։ Երբ մութը կոխեց, թուրքերը, լրացուցին իրենց անպատիվ պարտության նահանջը. քաշվեցան հավաքելով իրենց գահրիմաններուն (հերոսների—Հ. Ղ.) դիակները»[49]։

---

44 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 41։

45 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 273։

46 Նույն տեղում, էջ 309։

47 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 40։

48 Նույն տեղում։

49 Նույն տեղում, էջ 41։

Հայկական դիրքերից հաղթական «հուռռաները» տարածվում են քաղաքում։ Կիլիկիա թաղամասի վրա թուրքական մեծ հարձակման անփառունակ վախճանը ոգևորում է հաճընցիներին։ Լաց ու ողբին փոխարինում է երգն ու ցնծությունը։ Մարդիկ ողջագուրվում են և երգելով թափվում մոտակա բանջարանոցները՝ սնունդ հայթայթելու։

Ամենուրեք հնչում են ավանդական զուռնան ու թմբուկը, ռազմական երգերը։ Վերջիններից մեջ ամենից շատ տարածվածը՝ «Հառաջ ընթանանք», նրանք երգում են ռուսական «Անվախ ընկեր» հեղափոխական երգի եղանակով և հետևյալ բառերով.

Հառա՜ջ ընթանանք եղբայրներ,
Մարտի հրավեր կարդալով,
Հայրենյաց ազատությունը
Գնենք մեր սուրբ արյունով։

Բավ է, որքան տառապեցանք,
Բավ է, որքան մենք լացինք,
Այսուհետև մարտի դաշտում
Կռիվ տալով պիտ՝ մեռնինք[50]։

Պարտությունն անդրադառնում է թուրքական կանոնավոր զորքերի ու չեթեների մարտունակության վրա։ Նրանց հրամանատար Կողան օղլու Դուլանը, որն իր նախնական հաջողություններից հետո վստահությամբ էր գործում, հետևյալ հեռագիրն է ուղարկում Մ. Քեմալին. «Մեր հարձակումներն ապարդյուն անցան։ Հաճընը զենքով գրավել անկարելի է։ Պիտի սպասեմ, որ անոթութենե ուժասպառ անձնատուր ըլլան։ Արդեն քանի մը ամսվա բավելիք ուտելիք ունին»[51]։ Պաշարող ասկյարները սովի վրա հույս դնելով հանդերձ, չէին հրաժարվում հերոսական քաղաքը զենքով նվաճելու իրենց փորձերից։ Նրանք հույս ունեին, որ Մարաշի և նրա տասնյակ հայաբնակ գյուղերի ազգաբնակչությունը ոչնչացնելուց հետո Հաճընի գրավումն իրենց համար դժվար չէր լինելու։ Ուստի երկար ժամանակ զբաղվում են ուժերի վերադասավորումով և դիրքերի ամրապնդումով։

Մայիսյան օրերին համեմատաբար փոքրածավալ մարտեր են տեղի ունենում։ Քաղաքի հյուսիսային թաղամասում, որտեղ հիմնականում ծավալվել էին կռիվները, թուրքերը մայիսի 10-ին մեծ կորուստների գնով գրավում են քաղաքի սահմանագծից դուրս գտնվող մի քանի հայապատկան տներ։ Դրսից օգնության բացակայությունը և հակառակորդի զինվածությունը, դիրքային ու քանակական առավելությունը, մանավանդ սովը բազմապատկում են քաղաքի պաշտպանների մտահոգությունը նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք զգալի հարվածներ էին իջեցնում անընդհատ ավելացող քեմալական ուժերին և իրենց զենքը համալրում նահանջող հակառակորդից գրավվածով։

Բոլոր կողմերից մեկուսացված ու պաշարված հաճընցիները դեռևս հույս ունեին, որ Կիլիկիայում ֆրանսիական օկուպացիոն ուժերն արագ ու արդյունավետ աջակցություն պիտի ցույց տան իրենց։ 1920 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի Հանրապետության հռչակման երկրորդ տարեդարձի օրը նրանք Կ. Ջալյանից ստանում են մի նամակ, որտեղ ասված էր. «15 օրվա պարեն և 10 օրվա փամփուշտ ունինք։ Եթե տասը օր ալ ուշանանք, փչացումը անխուսափելի է։ Վաղը՝ պատմությունը ճիվաղներ պիտի անվանե ձեզի»[52]։ Սակայն ֆրանսիացիները երկու օր հետո քեմալականների հետ կնքեցին «1920 թ. մայիսի 30-ի զինադադարը, որի համաձայն ֆրանսիական զորքերը լքեցին

---

50 Այս երգը լսել եմ Հաճընում ծնված իմ վաղամեռիկ ընկեր Կիրակոս Որզյանից։

51 Մ. Թերզյան, նշվ. աշխ., էջ 316։

52 Նույն տեղում, էջ 326։

Սիսը և նահանջեցին Ադանա՝ իրենց հետ տանելով քաղաքի հայ ազգաբնակչությունը և անչափ դժվարացնելով Հաճընին օգնություն փութացող հայ կամավորների ջանքերը»[53]։ Հերոս հաճընցիները, այսպիսով, անելանելի վիճակի մեջ ընկան։

Ադանայում գտնվող Ամբողջական Հայաստանի պատվիրակ և Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Մ. Տամատյանը հուսադրական հեռագրեր էր ուղարկում Հաճընի պաշտպաններին և կոչ անում. «Կուվեցե՛ք քաջեր, օրական 200 հոգի ճամփա կելլե դեպի Սիս՝ մեկնելու համար Հաճընն»[54]։

Հաճընում պաշարված ժողովուրդը ևս «ի վիճակի չէր ըմբռնելու Կիլիկիո մեջ կիրակվող քաղաքական դիվային մեքենայությանց հակահայ իմաստը։ Հուսադրվեցավ Ադանայեն եղած անհիմն օգնության խոստումներուն վրա։ Հուսախաբ եղավ։ Ֆրանսիայի շահամոլ դիվանագիտության նժարը անգամ մը ևս ծռեցավ դարավոր թշնամիին կողմը, ընդդեմ հայ ժողովուրդին, ընդդեմ հայկական Կիլիկիո»[55], ուստի նրանք չհասկացան, դեռևս Հաճընի ճակատամարտից մեկ շաբաթ առաջ՝ մարտի 9-ին, Մ. Տամատյանին գնդապետ Է. Բրեմոնի ուղարկած նամակի հստակ բովանդակությունը, որտեղ ասված էր. «Ներկայիս ան (ֆրանսիական հրամանատարությունը—Հ. Ղ.) զորք պիտի չղրկե Հաճընն, ան չի կրնար ընել զայդ հակառակ իր փափաքին և չկրնար ալ հանձնարարություն ստանձնել հետագայի համար»[56]։

Կ. Չալյանը, անտարակույս, չէր իմացել, որ ֆրանսիացիներն օժանդակ ուժեր ուղարկելուց հրաժարվել էին, իսկ հայերը Սսում հարկադրաբար կազմակերպել էին հայկական ուժեր, որոնք բազմիցս անհաջող փորձեր էին արել պաշարված Հաճընին օգնելու համար։ Այդ ուժերը Հաճընի ճանապարհին իրենց վերջին փորձն անելիս քեմալականների սարքած ծուղակն ընկնելով համարյա ամբողջովին ոչնչացել էին։ «Արշավախումբը մատնված էր։ Մատնիչն էր Սսի Ֆրանս. քաղաքական կառավարիչ Թայարդան»[57]։

Արյունահեղ կռիվների հետևանքով ստեղծված ծանր պայմաններում իր պատասխանատվությունը գիտակցելով, Կ. Չալյանը հավաքում է վաշտերի հրամանատարներին, ինչպես նաև քաղաքի երևելիներին և առաջարկում է ամեն գնով, առանց հապաղելու նահանջել դեպի Սիս։ Հեռատես գործիչը նահանջը համարում է փրկության միակ ելքը։ «Ճեպեճին զինվորականներով տեղակալին համամիտ կգտնվի, ժողովականներեն մեծ մասը (աղաներ)՝ հակառակ կարտահայտվի»[58]։ Կ. Չալյանը փորձում է երևելիներին համոզել, որ ամբողջական կործանումն անխուսափելի է, և, որպեսզի հակառակորդը նահանջող հաճընցիների վրա չհարձակվի, անհրաժեշտ է գտնում, որ քաղաքում գտնվող «Թուրքերն ալ իբրև պատանդ միասին տանինք մինչև պետք եղած տեղերը։ Հիմա կատարյալ համոզում գոյացուցի, որ ֆրանսական իշխանությունը Հաճընն մահվան դատապարտեր է»[59]։

Հաճընի հերոսամարտի այդ ամենածանր օրերին Պետրոս եպիսկոպոս Սարաճյանը Կիպրոսից դիմում է համաշխարհային հասարակայնությանը և կոչ անում օգնել օրհասական օրեր ապրող իր համաքաղաքացիներին։ ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրություններին հղած հեռագրերում հայ կրոնական գործիչը դատապարտում է արևմտյան տերությունների անտարբերությունը և հարց է տալիս. «Հանդիսավորապես խոստացած չէի՞ք, որ ազգերու իրավունքը պիտի պաշտպանվի. հակառակ այդ

---

53 Ռ. Գ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 181։
54 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 434։
55 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 35—36։
56 Պայքար, 31. XII. 1951։
57 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 430։
58 Նոր Հաճըն, 1961, № 2, էջ 38։
59 Նույն տեղում, էջ 39։

խոստումին ոչ միայն մեզ արդարություն չըլլար, այլև, նույնիսկ դաշնակից-ռանակներու ներկայության հայ ժողովուրդը կչարդվի անխնա»[60]։

Հուլիսի սկզբներից քաղաքի ամբարները դատարկվելու պատճառով, ռազմանյութի «սովին» ավելացավ պարենայինը և ամեն օր փողոցներից հավաքում էին հատկապես տարեց մարդկանց կմախքացած մարմինները։

Ամբողջ ամռան ընթացքում քաղաքի հերոսական պաշտպանները ոչ միայն դիմագրավում էին թուրքական հարձակումները, այլև կատարում ռազմական համարձակ ձեռնարկումներ։ Օգոստոսի 5-ի երեկոյան, քաղաքի պաշտպանները անակնկալ կրակոցներով թուրքական ուժերի ուշադրությունը կենտրոնացրին իրենց վրա։ Գրեթե միաժամանակ հակառակորդի թիկունքից տեղացած արագ հարվածները խուճապ առաջացրին նրա շարքերում։ Մինչ քեմալականների ուժերը սարսափած գոռում էին «Հաճընլըլարա իմդա՞դ եթիշտի, քա՞չըն (Հաճընցիներուն օգնական ուժ եկավ, փախեք)»[61], հայ մարտիկները գրավում են քաղաքի վրա իշխող Տոնուզ-Սեքի բարձունքի վրա դրված թնդանոթը, ինչպես նաև Հաճընն տեղափոխում թշնամու վրաններում թողած զինամթերքի ու պարենի մեծ պաշարները։ Գիշերային «հակահարձակման ժամանակ հայ մարտիկները գրավեցին նաև քաղաքի վրա տիրապետող դիրքում գտնվող զորանոցը»[62]։ Հաճընի ճակատամարտերի անհայտ մասնակիցներից մեկի օրագրի գրառումներում գրված է. «Մեծ հարձակում, թնդանոթ տասնոց (10 մմանոց—Հ. Ղ.), մեկ միթրալյոզ (գնդացիր—Հ. Ղ.), 85.000 փամփուշտ, 450 թնդանոթի ռումբ, 5 սնդուկ Վե—Բե (ձեռնառումբ—Հ. Ղ.), 150 հրացան ու բավական պարեն առինք»[63]։ Հակառակորդի նահանջից հետո նրա թողած մեծ քանակությամբ ավարը հաջողությամբ քաղաք տեղափոխելով, «ժողովուրդը խուժեց թնդանոթին վայրը և զայն առոք-փառոք գետափեն մեծ պողոտա հանեց ու երգելով ու պարելով փոխադրեց Ս. Աստվածածնա եկեղեցվո հրապարակը»[64]։ Հաղթանակի ցնծություններին հետ միաժամանակ լսվեցին թշնամու նահանջող ուժերի վրա արձակվող ռումբերի որոտները։

Ռազմաճակատի գծում «թշնամին որևէ շարժում չըրավ 8—10 օր, հակառակ անոր որ պաշարման գիծը չափազանց նեղցած էր քաղաքին ամեն կողմը»[65]։

Օգոստոսի 5-ի հաղթանակից հետո քաղաքում տեղաշարժերն ավելի հեշտացան, հաճընցիները, իրենց ֆիզիկական գոյությունը երկարաձգելու և արտաքին օժանդակություն ստանալու հույսով թափվեցին շրջակա այգիներն ու բանջարանոցները, «պատառ մը չոր հացի տեղ ստիպված ըլլալով փնտրել կանաչեղեններ, թուփեր, վայրի խոտեր քաղել ու խաշել, նույնիսկ հազվագյուտ շներ ու կատուներ որսալու. ձիերն ու էշերը շատոնց մարսված էին»[66]։

Թուրքական զորքերի հրամանատար Կոզան օղլու Դողան բեյը նոր համալրումների կարիք էր զգում, ուստի ժամանակավորապես դադարեցրեց հարձակողական գործողությունները։ Հաճընը նոր մարտերի էր պատրաստվում։ Վեց ամիս տևող պաշարումը, սահմանափակ պարենով ու ռազմամթերքով, միայնակ, անօգնական ու մեկուսացած Հաճընի դրությունն ավելի ողբերգական դարձավ, երբ «երկրամասի չերքեզները, որոնք մինչ այդ չեզոք գիրք էին գրավում, միացան թուրքերին, իսկ պաշարվածների բազմաթիվ կոչերին ֆրանսիացիները ոչ միայն անտարբեր մնացին, այլև տարբեր պատըր-

60 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 263։

61 Նույն տեղում, էջ 443։

62 Մ. Պազմիլոզլու, նշվ. աշխ., էջ 118։

63 Տե՛ս Մ. Սեպուհ, Հաճընի ողբերգությունը (պաշարում և կոտորած), Հալեպ, 1960, էջ 156—157։

64 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 446։

65 Յ. Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 665։

66 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 290։

վակներով Ադանայի հայ կամավորական միավորումներին խանգարեցին օգնության հասնելու գործում»[67]։

Քեմալական հորդաները սեպտեմբերի վերջերին կրակը կենտրոնացրին Հաճընի մերձակա Ռումլու և Գյուզելիմ հայաբնակ գյուղերի վրա, հույս ունենալով թեթևացնել օգոստոսի պարտության տպավորությունը։ Սակայն այստեղ ևս նրանց պարտություն էր սպասում։ Վերևում մեր հիշատակած անհայտ մարտիկի օրագրում կարդում ենք նույն ժլատ տողերը. «Սեպտեմբեր. 21. Ռումլուն գրավեցինք հարձակումով»[68]։

Այնուամենայնիվ, այդ հաղթանակներն ավելի շատ կլինեին, եթե արտաքին օգնությունը վերջապես հասցվեր քաղաքի հերոս պաշտպաններին, որոնք առանց խուճապի մատնվելու դիմագրավում էին ոչ միայն թուրքերի հարձակումները, այլև օրեցօր ավերածություններ գործող սովը։

Հոկտեմբերը սկսվեց հակառակորդի հրանոթների կենտրոնացված կրակով։ Նույն ամսվա 3-ին հատուկ սուրհանդակի միջոցով «Ինքնապաշտպանության բարձր ժողովը» Ադանայում գտնվող Հայ ազգային միության ատենապետ Մ. Տամատյանին ուղարկում է վերջին նամակը, որտեղ ասված է. «Յոթ ամիսներե ի վեր գիշեր-ցերեկ մեկ մարդու նման կկռվինք մեզմե շատ զորավոր թուրքին դեմ։ Անոնց էն մեծ ապավինածնին (թնդանոթը—Հ. Ղ.) երկու ամիս առաջ ձեռք անցուցինք։ Ձեր ըսածին համաձայն այդ կողմեն գալիք օգնության կսպասեինք։ Աչքերնիս ճամփանիդ մնաց և այդ հույսով շատ մը պատեհություններ փախցուցինք և այսօր անոթի մնացինք։ Մինչ այսօր կռվի ընթացքին երկու հարյուր հրացանակիր կորսնցուցինք, մնացյալը՝ եթե այսպես երթա, անոթութենե պիտի կորսնցնենք»[69]։ Այս տխուր նամակից հետո Ադանայում նստած ֆրանսիական ռազմական ղեկավարությունը, Մ. Տամատյանը և «ազգային» մարմինները, մինչ այդ կրկնվող «շուտով կհասնինք», «մոտ օրերս կազատվիք», «կռիվը շարունակեցեք» և այլ հուսադրիչ կոչերից հետո, առմիշտ լռեցին։ Անհայտ մարտիկը այդ օրհասական մղձավանջի մասին իր օրագրում գրում է. «Սուրհանդակ ղրկեցինք ճգնաժամի մեջ օգնության համար, քանզի պարեն, էշ, ձի, շուն, կատու, մուկ չի մնաց. ծառի տերև ուտելով...»[70]։

Մահվան օղակը ավելի ու աչելի սեղմեց քաղաքի շուրջ։ Հաստատվեցին հետախույզների հաղորդումներն այն մասին, որ հակառակորդը բազմահազար զորք ու հրետանիով շրջապատել է քաղաքը։ 1920 թ. հոկտեմբերի 14-ի ամբողջ գիշերը 105 մմանոց թշնամական թնդանոթները ցնցում էին քաղաքը։ Անընդմեջ ռմբակոծությունից հետո 16 հազար քեմալականներ ճեղքեցին պաշտպանական գոտին և ներխուժեցին Հաճընի, իսկ «աղիողորմ ճիչերով խեղճ ժողովուրդը տրտմասարսուռ նոպաներու տակ սմքած՝ մահվան ու խտշելության վայրկյանը կհամբեր՝ վերջին աղոթքը մրմնջալով»[71], և քաղաքի լավագույն զավակները հերոսաբար ընկան իրենց դիրքերում։

Արհավիրք, մահ և ավերվածություն տիրեց ամբողջ քաղաքում։ Մոլեռանդ թուրքերի, քրդերի և չերքեզների հորդաները «ալլա՜հ, ալլա՜հ» ոռնալով հրդեհում էին քաղաքի տները, դպրոցական շենքերը, եկեղեցիները և այլ հաստատությունները։ Քաղաքի տարբեր թաղամասերում նորածին «երեխաներ խանձարուրներու մեջ փաթթված գետինները նետված էին. այր մարդիկ իրենց ընտանիքը կարգի շարած մեկ կապարով կգնդակահարեին՝ թշնամիին ձեռքը չիյնալու համար, կիներ, երեխաներ կաղոթեին և կպոռային աստուծմե օգնություն հայցելով»[72]։

---

67 Մ. Պաղծիլոզլու, նշվ. աշխ., էջ 118։
68 Մ. Սեպուհ, նշվ. աշխ., էջ 157։
69 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 490։
70 Մ. Սեպուհ, նշվ. աշխ., էջ 157։
71 Ս. Թերզյան, նշվ. աշխ., էջ 504։
72 Նույն տեղում, էջ 513։

Հերոսական Հաճընն ընկավ, քանզի «Ֆրանսիայի իմպերիալիստական շրջանների և նրանց ծրագրերն իրականացնող զինվորականության խարդախ, հայերի համար աղետաբեր քաղաքականությունը մի կողմից, և կիլիկիահայության բախտի տնօրինումը ստանձնած հայ մի քանի ղեկավարների անհեռատես քայլերը մյուս կողմից, հնարավորություն ընձեռեցին Անկարայի ղեկավար շրջաններին շարունակելու երկիրը հայերից մաքրելու թուրքական ավանդական քաղաքականությունը»[73]։

Թուրք բարբարոսները Հաճընը հրդեհելուց հետո ոչնչացրին նրա բնակչությանը։ Վեց հազար հաճընցիներից միայն չորս հարյուրի չափ մարդիկ՝ զինված կամ անզեն, կարողացան դուրս գալ մահվան օղակից։ Հաճընի զավակների աննկուն դիմադրական ոգին ու սխրագործությունները հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության փառավոր էջեր դարձան և անգնահատելի ժառանգություն՝ հետագա սերունդների համար։

ГЕРОИЧЕСКАЯ БИТВА АДЖЫНА

А. Е. КАЗАРОСЯН

Резюме

С 15 марта по 15 октября 1920 г. армяне киликийского города Аджына сражались против кемалистских войск и банд. Осажденный город с 6000-ым армянским населением превратился в военный лагерь и под руководством совета самообороны 8 месяцев вел бои, несмотря на то, что Франция не выполнила своих обещаний в оказании помощи армянам. В результате отсутствия последней, голода, численного и военного превосходства противника аджынцы прекратили оборонительные бои. Лишь 400 армянам удалось вырваться из кольца смерти. Непреклонный дух сопротивления и подвиг сынов Аджына вписались славной страницей в историю освободительной борьбы армянского народа.

THE HEROIC BATTLE OF HADJIN

H. E. GHAZAROSIAN

Summary

From 15 of March till 15 of October, 1920 Armenians of Cilician city Hadjin fought against Kemalist army and gangs. The besieged city, with 6000 Armenian population, turned into a military camp and under the guidance of the self-defence council carried on the struggle for 8 months, notwithstanding, that France didn't fulfil his promise to help Armenians. In consequence of the absence of the latter, hunger, numerical and military superiority of the enemy, people of Hadjin ceased their defensive fights. Only 400 Armenians could break away from the circle of death. Uncompromising spirit of resistance and feat of sons of Hadjin entered, as glorious pages, the history of emancipatory struggle of Armenian people.

---

73 Ռ. Գ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 177։